ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «Մուշեղ Գասոյան Վոլոդյայի» անհատ ձեռնարկատիրոջ դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող թիվ 2250 էլեկտրական ենթակայանը 3 (երեք ամիս ժամկետով), 5 000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ամսական վճարով «Մուշեղ Գասոյան Վոլոդյայի» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 67084437) վարձակալության իրավունքով տրամադրելուն՝ էլեկտրական ենթակայանի օգտագործման արդյունքում առաջացած բոլոր ծախսերը, այդ թվում՝ պարապ ընթացքի ռեժիմում ծախսված էլեկտրաէներգիայի վճարը՝ «Մուշեղ Գասոյան Վոլոդյայի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարելու պայմանով: